

մէջ մտնէին ինչպէս կլասսիկ, նմանապէս և ոչ կլասսիկ տարրերը: Այնուամենայնիւ նրա հիմնական տեսութիւնը նոր պոպուլարական էր, այն է երեք աշխարհների վարդապետութիւնը. ա) Մտքի աշխարհի մասին (պոէզիա), բ) Մտածող աշխարհի մասին (փիլոսոփիա) և գ) Զգայական աշխարհի մասին (ալեքսանդրիս): Մտքի աշխարհն ամենից բարձր է, որ զգայական աշխարհի հետ յարաբերութեան մէջ մտնել չի կարող. նա հաղորդութիւն է ունենում վերջինի հետ մտածող աշխարհի միջոցով, որի կենդրոնում գտնւում է արեգակի աստուածը՝ Փիլոնի լոգոսի նման մի բան: Յուլիանոսը արեգակի աստուծուն միւս աստուածներից աւելի էր պաշտում, մինչև իսկ Զևսից էլ առաւել: Երկրորդական աստուածների մասին նրա ունեցած գաղափարները շատ դժուար է որոշել: Երբեմն նա աստուածների վերայ նայում էր ինչպէս գաղափարների, որոնք արտայայտում են վերին աստուածութիւնը, երբեմն այդ աստուածութիւնների մէջ տեսնում էր ազգային բնաւորութիւն և կարծում էր, որ ամէն մի ժողովուրդ իւր աստուածն ունի, որի մէջ միանում են մի որոշ ժողովրդի կրօնական հայեացքները: Այդպիսի հայեացք ունենալով Յուլիանոսը պէտք է արդարացնէր հեթանոսական բոլոր կրօնները:

Կրօնական շատ հայեացքներ Յուլիանոսը փոխ առաւ քրիստոնէութիւնից, նա վիրաւորւում էր այն քուրմերի վարմունքից, որոնք ոչ մի բարոյական կանոն չէին ընդունում: Նա կամենում էր քուրմերին ժողովրդի բարոյական կեանքի համար օրինակ դարձնել. արդելեց նրանց կասկածելի արհեստներով պարապել, այն ժամանակուայ ճաշարանները յաճախել, պահանջում էր, որ նրանք բարեպաշտ կեանք վարեն, անաստուած (քրիստոնեայ) չլինեն և ընդհանրապէս ժողովրդի համար ճրագ լինեն: Անարժան քուրմերին նա յանձնարարում էր հեռացնել պաշտօնից, և ինքը մի քանի ամսով հեռացրեց մի քուրմի, որ խփել էր իւր եղբայրակցին: Յուլիանոսի կարգադրութեամբ քուրմերը պէտք է բանաստեղծների երկեր կարդային, որպէսզի ուղիղ աստուածապաշտութիւն սովորէին: Նրանք

կարող էին պարապել նաև փիլիսոփայութեամբ, սակայն որը բարձր և լուրջ է ու հեռու պիրրոնիզմից, որ դէպի կասկածամտութիւն էր տանում: Յուլիանոսը մտադիր էր քրմերի դասակարգի մէջ վանականութեան նման մի բան մտցնել: Յուլիանոսը ուշադրութիւն դարձնելով քրմերի լիոնադարձ յարաբերութեանց վերայ, նա հաստատեց դաւառական քահանայապետներ (Pontifex): Սրանք պարտական էին հսկել հպատակ քրմերի վերայ և անուղղաներին զրկել սլաշտօնից. Գաւառական այգպիսի քահանայապետներ էին՝ Թէոդորը Ասիայի համար, Արսակիոսը (Արշակ) Գաղատիայի համար և մէկն էլ Պեսսինոնտի համար:

Յուլիանոսն առանձին ուշադրութիւն դարձրեց հեթանոսների դէպի իրենց հաւատն ունեցած յարաբերութիւնների վերայ և զարմացած մնաց նրանց բարոյական սառնասրտութեան և ողորմածութեան բացակայութեան վերայ, որ, այսինքն ողորմածութիւնը, աշխատում էին փիլիսոփաները փիլիսոփայօրէն արդարացնել: Եթէ Աստուած, ասում էին նրանք, մարդուն կարիքների է մատնում, այն ժամանակ անօգուտ բան է այգպիսիներին օգնելը: Դրան Յուլիանոսը առարկում էր, թէ միանգամայն ամօթալի է հեթանոսների համար կարիք ունեցողներին և աղքատներին չօգնելը, երբ հրէաները բարերարութիւն են անում իրենց աղքատներին, իսկ Գալիլէացիք՝ (քրիստոնեաները) ոչ թէ միայն իրենցին են օգնում, այլ և օտարներին: Նա ինքը վճռեց, իբրև կայսր, աղքատ հեթանոսներին օգնութեան դալ: Նա Գաղատիա ուղարկեց 30 հազար մօզ ցորեն և 60 հազար սեկստար զինի. սրա $\frac{1}{3}$ մասը նշանակուած էր տաճարներին ծառայողների համար, իսկ $\frac{4}{3}$ մասը աղքատների համար. ապա, նա ցանկութիւն էր յայտնում, որպէս զի ուրիշներն էլ տրամադրեն հեթանոսներին նուիրաբերութիւններ անելու, որովհետև Հոմերոսի ժամանակ էլ օտարականներին ողորմութիւն էր տրւում, և ով վիրաւորում է օտարականին, նա զբանով վիրաւորում է Զևսին: Այգպիսով Յուլիանոսը մտածում էր նոր հիմքերի վերայ հեթանոսութիւնը վերականգնել:

Անտիոք գնալու ժամանակ քրիստոնեաների կողմից Յուլիանոսն անախորժութիւնների հանդիպեց, սակայն Անտիոքում նրան աւելի մեծ հիասթափումն էր սպասում հէնց հեթանոսների կողմից: Այն ժամանակ Անտիոքը լեզուի ազատութեան նկատմամբ Ադէքսանդրիայից յետոյ, համարեա, երկրորդ քաղաքն էր: Եթէ ադէքսանդրացին զանազանում էր միւսներից խօսքի ազատութեամբ և դէպի ապստամբութիւնն ունեցած հակմամբ, անտիոքացին խօսքի ազատութեան տեսակէտով գերազանցում էր միւս բոլորին: Անտիոքացիք իրենց զգում էին որպէս ճշմարիտ սերունդ յոյների և իրենց պահում էին նրանց նման: Յուլիանոսը կարծում էր թէ հեթանոսութեան վերականգնումն քարոզելով, ուրախութիւն առաջ կրերի հեթանոսների մէջ: Բայց, երևաց, որ հէնց հեթանոսները նրան չէին համակրում: Կայսրը, որ ծանօթ էր ոգեհարցներին և փիլիսոփաներին, չգիտէր թէ ի՞նչ է ներկայացնում միջին հեթանոսը: Էապէս նա անաստուած էր, որ դեռ ևս հին համոզումներն էր կրում, առանց իրեն հաշիւ տալու դրանց համար: Աստուածների մասին հաստատուն հասկացողութիւն նա չունէր: Հեթանոսութիւնն էլ յամենայն դէպս այնպիսի մի կրօն էր, որը սերտ կերպով կապուած էր յունական քաղաքակրթութեան հետ: Այդ քաղաքակրթութեան պտուղներով հեթանոսն օգտւում էր, սակայն այն հարցով, թէ ի՞նչ կապ ունի նա հեթանոսական կրօնի հետ, երբեք չէր հետաքրքրւում: Միջին հեթանոսը ընդհանուր աշխարհայեցողութիւն չունէր: Հեթանոսութիւնը նրա վրա ոչ մի պարտականութիւն չէր դնում, և նա պահպանում էր հեթանոսական կրօնը, իբրև իւր նախահայրերի կրօն, իրեն՝ միայն հեթանոս էր համարում, սակայն գործնականապէս այդ չէր արտայայտում, իսկ եթէ արտայայտում էլ էր իւր անձնուիրութիւնը դէպի կրօնը, այդ էլ միայն ըստ երևոյթին նա անում էր իբր ջոյց տէրութեան դէմ: Յուլիանոսը շուտով տեղեկացաւ, հեթանոսների իրենից ունեցած անբաւականութեան մասին այն պատճառով, որ նա կրօնական հրամանների կատարումն էր պահանջում:

Անտիոքացիներն ասում էին, թէ իրենց քաղաքին փնաս չեն տուել ոչ Ք. և ոչ Կ. (այսինքն՝ ոչ Քրիստոս և ոչ Կոստանտինոս), և որ նրանք ըստ առաջնոյն խաղաղ ապրել են կամենում։ Այդպէս չէր ինքը կայսրը։ Նա ոչ միայն իրեն եռանդուն հեթանոս յայտարարեց, այլ և կամենում էր լինել և էր իսկապէս գլուխ հեթանոս քուրմերի. ինքը փայտ էր բերում, կրակ վառում, զոհաբերութեան համար բերուած կենդանիների փորոտիներն էր նայում. իսկ հեթանոսական օրացոյցը, որն իւր մէջ հեթանոսական բոլոր տօներն էր պարունակում, հազիւ թէ պակաս գիտէր այն քուրմերից, որոնք նրա խորհրդատուներն էին։ Այդպիսով Անտիոքացիների և Յուլիանոսի մէջ թիւրիմացութիւններ ծագեցին, որոնք երկու կողմից էլ երկիւծաբանութեամբ էին վերջանում։ Անտիոքացիներից շատերն ասում էին, որ կայսրը զոհաբերութեան արուեստի մէջ ունեցած մանրակրկիտ մասնակցութեամբ նուագեցնում է կայսեր արժանիքը, հանդէս գալով իբրեւ «*βωρολόχος*»։ Այդ խօսքը տառացի կերպով նշանակում է մի մարդ, որ դիտում է զոհաբերութեան սեղանը (*βωρολόχος*)։ Քաղաքացիներից ոմանք հաւաքւում էին զոհարանի մօտ և զոհաբերութիւնից մնացած մսի կտորներից խնդրում. իսկ եթէ չէր յաջողւում, զողանում էին, և կամ, վերջապէս խաբում էին խեղկատակութեամբ։ Այդ տեսակ մարդիկ «*βωρολόχοι*» էին կոչւում։ Այդ անունով էին կոչւում Անտիոքացիք նաև Յուլիանոսին, որովհետև կարիքն ստիպում էր նրան լինել հասարակութեան մէջ, որը խաժամուխ ամբոխ էր ներկայացնում, և որտեղ տղամարդիկ վատ էին, իսկ կանայք ևս առաւել։ Ուստի և հանդէսները մի փոքր խայտառակ տպաւորութիւն էին թողնում։

Դէպի հեթանոսութիւնն ունեցած Յուլիանոսի եռանդի և հեթանոսների դէպի նա ունեցած անտարբերութեան համար հետեւեալ փաստը կայ։ Դամիսայի մօտ (նոճիներով յայտնի Անտիոքի արուարձանը) մի ժամանակ կար Ապօլլոն-զուշակողի տաճարը։ Այս տաճարը փակուած էր։ Յուլիանոսին ասացին, թէ աստուածները դադարեցին խօսելուց,

որովհետեւ տաճարի մօտ շատ ննջեցեալներ կան (քրիստոնէական գերեզմանատանը)։ Յուլիանոսը կամենալով հեթանոս մարդարէններին վերահաստատել, հրամայեց մաքրել գերեզմանատունը։ Քրիստոնէաները հեթանոսներին իրենց յանցանքը ցոյց տալու համար սաղմոսներ երգելով տեղափոխեցին Բաբելոն նահատակի մասունքները։ Այդ ժամանակ վնասուեցին միայն Թէոդոր ճգնաւորը և Պուլլիա անունով կինը, սակայն տանջանքի չենթարկուեցին, այնպէս որ նրանք իբրեւ խոստովանողներ են հանդէս գալիս։ Երբ այդ տեղը մաքրուած, վերջացած էր հոկտեմբերի 22-ի գիշերը տաճարն այրուեց։ Հրդեհի մէջ հասարակական կարծիքը քրիստոնէաներին էր մեղադրում, որոնք որպէս թէ այդ արել են ի վրէժխնդրութիւն այն բանի, որ իրենց հրամայուեց գերեզմանատունը մաքրել։ Սակայն այս կասկածը միակ վարիանսը չէր։ Ծառերը հրդեհը պատահականութեան էին վերադրում։ Ինչ որ շրջիկ հեթանոս փիլիսոփայ տաճար է գալիս, արձան կանգնեցնում, առաջը մօմ վառում և գնում։ Այդ մօմից գիշերը հրդեհ է առաջանում և կրակը տարածում։ Չնայեա՞ծ դրան, Յուլիանոսը մեղադրում էր քրիստոնէաներին և հրամայեց, նրանց պատժելու համար ի պատիւ նահատակների Միլետի մօտ կանգնեցրած տաճարները քանդել։ Անտիոքի մայր տաճարը փակուեց, անօթները պղծութեամբ յափշտակուեցին հաւատաւրացներին յատուկ Յուլիանոսի խոստովեամբ։ Թէպէտեւ այդ կողոպուտի մէջ մեղաւորները կոտորուեցին, բայց Յուլիանոսն էլ գերծ չմնաց նշաւակուելուց։ Նա այսպիսի տխրօս ունէր. «Julianus Felix Augustus», իսկ հեթանոսները այդ խօսքերն առանձին առանձին էին արտասանում, «Julianus»... «Felix»... «Augustus»... դրանով ակնարկելով Յուլիանոսի մահը, որովհետեւ քրիստոնէական տաճարները կողոպտող սպանուած յանցադործների թուի մէջ կային անձնաւորութիւններ, որոնք «Julianus» և «Felix» անուններն էին կրում, հետևապէս հերթը հասել էր Օգոստոս անունը կրողին։

Յուլիանոսին առանձնապէս զայրացնում էր հեթանոսների անտարբերութիւնը դէպի տօնախմբութիւնները։

Անտիոքում ամէն տարի ի պատիւ Ապօլլոնի տօն էր կատարուում: Մի անգամ, այդ տօնի օրը, առաւօտեան, Յուլիանոսը Զեսի Քասիա տաճարից ճանապարհուեց Դափնա, մտածելով թէ այնտեղ զոհաբերութեան համար անագին բազմութիւն կգտնի, սակայն զրա փոխարէն այնտեղ միայն մի քուրմի պատահեց, որը ձեռքին մի սաղ ունէր: Յուլիանոսը հարցրեց, ի՞նչ զոհաբերութիւն պէտք է լինի: Քուրմը պատասխանեց. «Ես սաղը իմ կողմից եմ զոհ բերում»: «Իսկ ինչո՞ւ ժողովուրդ չկայ»: Քուրմը բացատրեց, թէ ժողովուրդը կարևոր չէ համարում զոհաբերութեանց վերայ ծախսեր անել: Այդ պատճառով Յուլիանոսը նախատում էր Անտիոքացիներին: Նա ասում էր. «Ես ենթադրում էի, թէ իւրաքանչիւր ընկերութիւն մի մի սպիտակ եզր կբերի, և կամ, գոնեա, ամբողջ քաղաքը մի եզր կբերի»: Դրա համար Անտիոքացիք նրան պատասխանեցին երկտող ոտանաւորով. «Սպիտակ եզները ողջունում են Յուլիանոսին. եթէ նա յաղթէ պարսիկներին, այն ժամանակ սպիտակ եզները կեանք չեն ունենալ»:

Յուլիանոսն իւր ներողամտութիւններով կամենում էր հեթանոսների տրամադրութիւնը գրաւել, սակայն նրաներողամտութիւնն ի չարն էին գործ դնում: Այդպէս, Յուլիանոսը կամենում էր ղեկուրիօնների¹⁾ թիւը լրացնել: Բայց Անտիոքի սենատը անքաղաքավարի կերպով վարուեց. նա նոյն իսկ ղեկուրիօնների համար պատարագ (Λειτουργία) նշանակեց, այսինքն հասարակական պարտիք: Սենատը դրանով չափն անցկացրեց. հրամանը միայն ղեկուրիօնների թիւն աւելացնելու համար էր, իսկ նրանց զբաղմունքներ տալու համար ոչինչ չէր ասուած: Մի անգամ, երբ Յուլիանոսը թատրոն եկաւ, ժողովուրդը նրան ընդունեց հետեւեալ աղաղակներով. «Ամէն բան շատ է և ամէն բան թանկ է»: Երևաց, որ վաճառականները միմեանց հետ պայման կապելով, ապրանքների արժէքն աւել-

1) Տասնապետ, կամ հռովմէական ղեկուրիայի կառավարիչ, որ բաղկացած էր 10 մարդուց:

լացրել են: Յուլիանոսն ի հաշիւ իւր արդիւնքներն հաց էր գնում կամենալով Անտիոքացիներին օգնել: Շուկայում, իսկապէս շատ հաց երեցաւ, այնպէս որ սկսեցին բաց թողնել ոչ թէ առաջուայ նման 10 այլ 15 մօդ: Սակայն Անտիոքացիք այստեղ էլ դժգոհ մնացին: Նրանք սկսեցին գոռալ Յուլիանոսին. «Հաց և իւղ կայ, իսկ ձուկ և միս չկայ»: Յուլիանոսը պատասխանեց. միայն թէ հաց լինի, իսկ ձուկը և միսը — ճոխութիւն է: Չափաւոր մարդուն բաւական է և այն, ինչ որ կայ: Բանը Յուլիանոսի արտաքինը ծաղրելուն հասաւ, առանձնապէս նրա մօրուքին, որը նա փիլիսոփայի նման երկարացրել էր օգոստոս դառնալով (մօրուքը վերջանում էր սուր ծայրով և իսկապէս պատկանելի էր): Ծաղրում էին նաև նրա կեանքի տարօրինակ եղանակը: Յուլիանոսը այդ ծաղրերին պատասխանեց՝ «'Αντιοχείως ἢ Μεσοπώγων» շարադրութեամբ, որից և մենք տեղեկանում ենք նրա Անտիոքացիների հետ ունեցած յարաբերութեան մասին: 363 թուի վերջին այդ յարաբերութիւնները այնքան սուր կերպարանք ստացան, որ Յուլիանոսն ստիպուած էր թողնել Անտիոքը: Անտիոքացիք իրաւունք ունէին. նրանք պէտք է կայսեր պալատի պահպանութեան ծախքը վճարէին, ուստի և նրա ներկայութիւնը հաճելի չէր: «Թող, ասում էին նրանք, օգոստոսը պատժէ և միւս քաղաքները»: Անտիոքացիների այսպիսի անբարեացակամութեան պատճառով, Յուլիանոսը պարսից դէմ արշաւանքի դուրս գալով, ուղղակի յայտնեց, որ նա մի անգամ ընդ միշտ թողնում է Անտիոքը և իրեն ապրելու տեղ է ընտրում Տարսոսը: Այդպիսով Յուլիանոսը չկարողացաւ հաշտ ապրել նոյն իսկ հեթանոսների հետ:

Սակայն Յուլիանոսը բաղդաւոր էր գէթ նրանով, որ փառքով մեռաւ: Առաջնորդողներից խաբուած, նա Պարսկաստան մտաւ և այստեղ իրեն յանկարծ շրջապատուած տեսաւ պարսից թագաւորի զինուորական ոյժով: Քաջութիւնից մղուած, առանց զրահ հագնելու, փութաց նա պատերազմի աւելի վտանգաւոր կէտերը դիտելու և վիրաւորուեց ձեռքից ու կողքից, այնպէս որ տէգը հասել էր մինչև լեարդը:

Սակայն մի ուրիշ կարծիք էլ կար Յուլիանոսի մահուան մասին, որպէս թէ նա զիտմամբ զրահ չէր հագել, որպէսզի գոնեա փառքով մեռնի, որովհետեւ, տեսնելով իւր հպատակները զէպ իրեն ունեցած անբաւականութիւնը, կեանքից յուսահատուել էր։ Սոգոմէնոսը հաստատում է, որ Յուլիանոսը քրիստոնեայի ձեռքով սպանուեց, և այս, նրա կարծիքով, բոլորովին դատապարտելի չէ, որովհետեւ այստեղ բարեպաշտութեան նախանձախնդրութիւնն էր խօսում։ Սակայն, Յուլիանոսի սպանութեան մէջ քրիստոնեաներն մեղք չունէին։ Նա վիրաւորուեց կռուի խառն բռպէին և, այնուամենայնիւ հերոսական մահով վախճանուեց։ Երբ նրան գտան վիրաւորուած, տեղափոխեցին վրան և վէրքը կապեցին։ Այդ թեթեւացրեց նրա տանջանքները և նա ձի պահանջեց, կամենալով նորից կռուի դաշտը դնալ։ Սակայն նրան չթողեցին, որովհետեւ արիւնհոսութիւնը շատ մեծ էր։ Նա սկսեց խօսել փիլիսոփաների և բարեկամների հետ հանդերձեալ կեանքի, հողւոյ անմահութեան մասին։ Յուլիանի 27-ից—28-ի զիշերը Յուլիանոսը վախճանուեց։

Քրիստոնեաների հետ ունեցած Յուլիանոսի յարաբերութեանց մասին պէտք է ասել, որ նա քաջութիւն ունեցաւ հանդէս դալ քրիստոնեաներին իբրեւ թշնամի, սակայն իբրեւ իմաստուն և զգոյշ թշնամի։ Նա յայտարարեց, որ անաստուած Գալիլէացիներին չպէտք է ծնծել և կամ սրտով, հապա համոզելով նրանց բերել զէպի աստուածապաշտութիւն։ Նա, որպէս շատ կարգացած մարդ, հասկանում էր որ քրիստոնեաներին կարելի է վնասել այլ կերպ, — հրէաների միջոցով։ Եւ այդ պատճառով նա գրականութեան մէջ հանդէս է դալիս իբրեւ վիճարան քրիստոնեաների դէմ։ Նա իւր գրուածքների մէջ առաջ է տանում այն միտքը, թէ քրիստոնէութիւնը հրէութեան այլասերումն է, որ քրիստոնեաները վերցրել են հրէաներից ամէն բան, ինչ որ սրանք վատ բան ունին, որ հրէաները կրօնական տեսակէտից զերազանցում են քրիստոնեաներին յամենայն գէպս նրանով, որ տղգային կրօն ունին։ Յուլիանոսը հրէից

քահանայապետներին շատ սիրալիր նամակներ էր գրում։ Այդ նամակների մէջ խոստանում էր այցելել Երուսաղէմն ու տաճարը և վերջինս վերանորոգել։ Սակայն, ինչպէս յայտնի է, այդ նրան չյաջողուեց։

Քրիստոնեաների դէմ Յուլիանոսը հետեւեալ ուղղակի խիստ միջոցներն է գործ դրել. ա) հասարակական պաշտօններից նրանց հեռացնում էր, բ) արգելքներ էր հանում նրանց առաջ կլասսիկ կրթութիւն ստանալու համար։ Այդ միջոցները Յուլիանոսը գործ էր դնում խորամանկ քաղաքականութեամբ։ Այսպէս, նա ասում էր, որ քրիստոնէութիւնը արգելում է սուր գործածել։ Ինչպէս կարող է նա քրիստոնեային պաշտօն սալ և ինչպէս կարող է վերջինս ծառայել չխախտելով իւր հաւատը։ Կամենալով արգելք լինել քրիստոնեաների ուսումնասիրութեանը Յուլիանոսը կտրգադրեց, որ ուսուցչական նոր բացուած տեղերի համար նշանակուեն այնպիսի կանգիտասաններ, որոնք պէտք է հաստատուեն տեղական դիւանատներից։ Այս միջոցն իրական միջոց էր քրիստոնեայ ուսուցիչներին այն ժամանակուայ ուսումնասիրաններից հեռացնելու համար, որովհետեւ դիւանատները կազմուած էին հեթանոսներից։ Պրօէրեպօսին (?) գրած 42-րդ իւր նամակում, որին նա աշխատում էր հեթանոս դարձնել և առաջարկում էր իւր սլամմադրի տեղը, նա հետեւողական կերպով դատում է ուսուցչական տեղերը քրիստոնեայ պաշտօնականներով փոխարինելու անյարմարութեան մասին։ Նրա կարծիքով, առանց կլասսիկ օրինակների ուսումնասիրութեան բանահիւտութեան դասաւանդութիւնը անհասկանալի է։ Իսկ ով ուսումնասիրում է այդ օրինակները, նա անհրաժեշտօրէն ծանօթանում է հեթանոսական կրօնական հայեացքների և նրանց բացատրութեանց հետ։ Սակայն արժէ որ քրիստոնեայն մի քանի գրախմայի համար իրեն ստորացնէ։ Ուստի և թող դասատուները հեթանոսներ լինեն, իսկ քրիստոնեաները եկեղեցում վերձանեն։ Մատթէոսին և Ղուկասին։ Յուլիանոսի դործադրած այս միջոցը ոմանք չսովազանցացրած կերպով հասկացան և բացատրեցին,

իրը թէ՛ նա քրիստոնեաներին կլասսիկ կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից բոլորովին զրկել էր։ Բայց Յուլիանոսը պահանջում էր միայն, որ դպրոցներում մանուկներն ուսում առնեն հեթանոս—հռետորների առաջնորդութեամբ, իսկ քրիստոնեայ ծնողներն իրենք չէին ուղարկում երեխաներին ուսումնարան, որտեղ ուսուցիչները հեթանոսներ էին։ Սակայն Յուլիանոսի թագաւորութիւնը երկարատե չեղաւ և քրիստոնեաների կրթութեան վերայ մեծ ներգործութիւն թողնել չէր կարող։

Եկեղեցու ներկայացուցիչների վերաբերութեամբ Յուլիանոսն աշխատում էր իւր յարաբերութիւնների մէջ մեծահոգի երևալ, բայց նպատակն էր նպաստել հեթանոսութեանը և փնտսել քրիստոնէութեանը։ Քրիստոնեաների մէջ բաժանմունքներ կային։ Այդ բաժանումների գլխաւոր պատճառ եղողները աքսորուած էին, սակայն Յուլիանոսն իրաւունք տուեց վերադառնալ նրանց, ով որ էլ լինէր—ուղղափառ թէ աղանդաւոր։ Այս կարծեցեալ մեծահոգութիւնը Յուլիանոսը իւր բարեկամների շրջանում բացատրում էր նրանով, որ ոչ ոք միմեանց այնպէս չի ատում, ինչպէս քրիստոնեաները, այնպէս որ, եթէ նրանց միացնենք և ազատութիւն տրուի, այն ժամանակ նրանք իրար, ինչպէս շներ, կզգեն։ Այդ պատճառով Յուլիանոսն իրաւունք տուեց աքսորից վերադառնալու, ինչպէս ուղղափառութեան ներկայացուցիչներին, այնպէս էլ բոլոր քրիստոնեայ աղանդաւորներին։ Այդ միջոցին Աղէքսանդրիայի եպիսկոպոսը Գէորգ Կապադովկացին էր, որ ապրում էր Աղէքսանդրիայից հեռու—արևելքում։ Յուլիանոսի հրամանի համաձայն նա վերադարձաւ Աղէքսանդրիա։ Սրա վերադարձը խռովութեան պատճառ եղաւ, որովհետեւ նա յայտնի էր իւր խստութեամբ, և գործը նրանով վերջացաւ, որ նա քաղաքի ընակիչների ձեռքով սպանուեց։ Յուլիանոսը Աղէքսանդրացիներին գրած իւր նամակում այդ սպանութեան համար խիստ յանդիմանութիւն կարգաց։ Նա հրամայեց Գէորգ Աղէքսանդրացու գրադարանը գտնել և ամբողջովին իրեն, Յուլիանոսին, յանձնել։ Սակայն Գէորգի

սպանութեան ժամանակ նրա տունը կողոպտուել էր և բոլոր ունեցածը յափշտակուել: Աղէքսանդրիայի գահի թափուը մնալուց յետոյ յունուարին Աղէնսանդրիա վերադարձաւ ս. Աթանասը: Գահ բարձրանալով ս. Աթանասը գործունեայ կերպով սկսեց Աղէքսանդրիոյ եկեղեցու գործերը կարգի բերել: Բաժանման փոխարէն նա քրիստոնեաների մէջ կատարեալ միութիւն հաստատեց: Նրա ազդեցութեամբ հեթանոսներից ոմանք սկսեցին մկրտուել: Տեսնելով, որ Աղէքսանդրիոյ եկեղեցու գործերը լաւ ուղղութիւն ստացան, Յուլիանոսը իւր վեհութիւնը վիրաւորուած ցոյց տուեց: Նա ասում էր, թէ նրանց իրաւունք էր տուած—նախկին աքսորուածներին, միայն հայրենիք վերադառնալ, և ոչ թէ իրենց գահերը բարձրանալ, և որ Աթանասն իւր հրամանը չէ հասկացել: Իսկ երբ Աթանասը մի քանի հեթանոսների մկրտեց, Յուլիանոսը բարկացած ասաց. «Եւ նա համարձակուեց մկրտել մի քանիսի ἐλλήνων, այսինքն, բարձրաստիճան կանանց»: Աթանասն ստիպուած էր նախ Աղէքսանդրիայից, ապա և Եգիպտոսից հեռանալ:

Սակայն Յուլիանոսն իրեն պահել չկարողացաւ: Նա մեծահոգութեամբ միայն ցուցամոլութիւն էր անում և ըստ երևոյթին աշխատում էր մօտենալ եկեղեցու ներկայացուցիչներին,—իսկ իրօք, նա չէր քաշում նրանց վերայ ծիծաղելուց: Նա ծաղրում էր Մարիոս Քաղկեդոնացուն, որը կոյր էր: Սակայն Մարիոսը իրեն հերոսի նման պահեց: Նա Յուլիանոսին ուղղակի երեսին ասաց. «Շնորհակալ եմ Աստծուց կուրութեանս համար, որովհետեւ բազմունեմ հաւատուրացի արարմունքները չտեսնելու»: Յուլիանոսն այդ բանին իբր իրեն անտարբեր ցոյց տուեց: Անտիոքում Յուլիանոսը չկարողացաւ հաստատամտութիւն պահպանել: Այստեղ գրութիւններով ձգտում էր կռիւներ առաջ բերել քրիստոնեաների և եպիսկոպոսների մէջ: 362 թուին Անտիոքում քրիստոնեաների և հեթանոսների մէջ անբաւականութիւններ ծագեցին: Գեռ ևս առաջ Յուլիանոսը գրել էր Բօստրայի Տիտոս Եպիսկոպոսին, թէ նրան է պատասխանատու ճանաչում այն անկարգութիւն-

ների համար, որոնք քրիստոնեաները գործում են: Տխուսը պատասխանեց կայսեր, որ քրիստոնեաները երբէք կարող չէին ընդհանուր շարժման մէջ մեղաւոր լինել, որ նրանք հնազանդ են իրենց հովուին, և որնէ անկարգութեան նշան չի եղել: Յուլիանոսը զրեց Անտիոքի քրիստոնեաներին, որ նրանք ստորացնում են իրենց, առանց եպիսկոպոսի ոչինչ չկարողանալով անել, որ նրանք դրա համար են խաղաղ ապրում, որովհետև նրանց եպիսկոպոսը զսպում է:

Յուլիանոսը պարզապէս յայտարարեց, որ ինքը չի թոյլ տալ Գալիլէացիներին որ և է մնաս հասցնել. մինչդեռ ուրիշները չափն անց էին կացնում, այնպէս որ, նրանց պատճառով Յուլիանոսն էլ մեղաւոր է հանդէս գալիս քրիստոնեաների վերայ գործ դրած բռնութիւնների համար: Այդ բռնութիւններն առանձնապէս տեղի ունեցան Ասորիքում տաճարներ քանդելու ժամանակ: Թէ Յուլիանոսն ինչպէս էր վերաբերում քրիստոնեաների այս դժբաղդութիւններին, խօսում է հետևեալ փաստը: Գաղայից ոչ հեռու, ծովի ափին, գտնւում էր Մայիւմ նաւահանգիստը, որի բոլոր ընդհիւճները քրիստոնեաներ էին զեռ և նախորդ թագաւորների ժամանակ, որի համար և այդ քրիստոնեաները կայսրներից անկախ Գաղայից կառավարութիւն էին ստացել: Այս հողի վերայ Գաղայի և Մայիւմի ընդհիւճների մէջ ընդհարումն առաջ եկաւ, որի ժամանակ սպանուեցին Մայիւմի ընդհիւճներից 10 քրիստոնիայ: Երբ այդ մասին յայտնեցին Յուլիանոսին, նա պատասխանեց. «Ինչ մեծ բան է, որ հելլենացու ձեռքը ջախջախել է ինչ որ մի 10 Գալիլէացի»: Եւ այդ պէտքով ինքնապէս Յուլիանոսը ոչ միայն հալածում էր քրիստոնեաներին, այլ և նրանց վերայ ծիծաղում էր, օգտուելով նրանց վարդապետութեան հետ ունեցած ծանօթութիւնից: Այսպէս օրինակ, մի անգամ Դոմեսարիոս ճգնաւորի այրի մօտով անցնելիս, նա իւր ուշադրութիւնը դարձրեց այրի մօտ հաւաքուած քրիստոնեաների վերայ և կամենալով նրանց ծաղրել, դարձաւ Դոմեսարիոսին այսպիսի խօսքերով.

«Եթէ դու կամենում ես փրկուել, այն ժամանակ ինչո՞ւ ես հաւաքում ժողովրդին. միայնակեաց եղիւ»։ — Ե հրամայեց փակել այրի բերանը քարերով։ Այդպիսով ճգնաւորը կենդանի կերպով թաղուեց այրի մէջ։ — Մի ուրիշ անգամ, պարսից պատերազմի ժամանակ, նա կնում էր Խառանի մօտով, որ հռչակուած էր հեթանոսական զոհաբերութիւններով, և այստեղ աստուածներին զոհ բերեց։ Այստեղից նա Եդեսիայի եկեղեցին տուգանքի ենթարկեց և միևնոյն ժամանակ այսպէս ասաց, «քրիստոնեաները դժբաղդ են, երբ նրանց չեն հալածում», և որպէսզի «նրանց երկնային թագաւորութեան մէջ մանելը դիւրին լինի», «հրամայեց Եդեսիայի եկեղեցու գանձերը գրաւել»։ Աչքի առաջ ունենալով հեթանոսութեան շահը, նա իւր զինուորներին նկատմամբ հետեւալ կարգադրութիւնն արաւ. պէտք է իրեն պատկերացնեն արձաններով և պատկերներով հեթանոս աստուածներին հաւատար, այնպէս որ քրիստոնեայ զինուորը երկրպագելով կայսեր, աւամայ պէտք է երկրպագէր նաև հեթանոս աստուածներին։ Նոյնպէս զինուորներին դրամական պարգևներ տալու ժամանակ նա կարգադրեց, որ զինուորը մօտենալով նրան, որպէս թէ առողջապահական տեսակէտից, կնդրուկ ձգի կրակի մէջ. իսկ վարագոյրի յետը պահուած էին հեթանոս աստուածների պատկերները, այնպէս որ ծխելն իսկապէս նրանց էր վերաբերում։ Իսկ երբ հեթանոսները քրիստոնեայ զինուորներին այդ բանը մատնանշում էին, վերջինները ստացած դրամները զայրոյթով գետին էին ձգում։ Քրիստոնեաներին ճնշելու նոյն դիտաւորութեամբ հրամայեց, որպէսզի շուկայի բոլոր պատուհները զոհի արեամբ սրբուեն։

Յուլիանոսը քրիստոնեաներին կրօնական տեսութիւնների ազատութիւն տուեց, սակայն միւս կողմից հեթանոսների գաղանային վարմունքները քրիստոնեաների դէմ թողնում էր անպատիժ։ Հալածանքը այնպիսի ամենատգեղ ձևերով էր տեղի ունենում, որի ժամանակ մենք տեսնում ենք այնպիսի զրկանքներ, որպիսիք նախընթաց ժամա-

նակներում անկարելի էր տեսնել: Այսպէս օրինակ, հեթանոսների ամբոխը Գաղայում և Ասկաղօնում սպանելով քահանաներին և կոյսերին, կտրատելով սրանց մարմինները և փորտիքը լցնելով գարիով, խոզերի առաջ ձգեց: Փիւնիկիայի Հիլիօպօլիս քաղաքում մի մոլեռանդ հեթանոս Կիւրեղ սարկաւազի լեարդից մի կտոր պոկեց և սկսեց կրծել ատամներով: Հեթանոսները քանդում էին քրիստոնեաների գերեզմանները և հանում ննջեցեալների ոսկորները: Փորձեր եղան Սերաստիայում գտնուած ս. Յովհաննէս Մկրտչի մասունքները ոչնչացնելու, սակայն այդ նրանց չյաջողուեց: Քրիստոնեայ մի նահատակ եպիսկոպոսի գանգ հեթանոսները կանթեղի տեղ էին կախ արել: Հեթանոսութեան հանդիսաւոր վերականգմանը եղիպտոսում ուղեկցում էր Նզիրպոսի մի քանի եպիսկոպոսների մահապատիժները: Արեթուսի Մարկոս եպիսկոպոսից հեթանոսները պահանջում էին վերաշինել քրիստոնէական քանդուած տաճարները: Նա հրաժարուեց, այդ ժամանակ հեթանոսները պահանջեցին գոնեա փողերի մի մասը, սակայն դրա համար էլ մերժում ստացան, այն ժամանակ ամբոխը եպիսկոպոսին մեղքի մէջ շաղախելով արեգակի տակ կանգնեցրեց, որպէսզի միջատները խայթոտեն: Այնուամենայնիւ Մարկոսն անմիաս մնաց և խոհեմ հեթանոսները ծաղրանքը դատարեցնելու նախազգուշացումն համարեցին այդ: Ինքը Լիբանիոսը, քրիստոնեաների համար դիմում էր Յուլիանոսին, մատնացոյց անելով Մարկոսի օրինակի վերայ:

3. Կայսրների կրօնական փաղափականութիւնը Յուլիանոսից յետոյ

Յուլիանոսից յետոյ գահն անցաւ Յորիանոսին (363—364): Սրա կարճ կառավարութիւնն աչքի է ընկնում կրօնի համբերատարութեան սկզբունքի խիստ զործադրութեամբ: Իրեն ուղղափառների կողմնակից յայտարարելով, Յորիանոսը

նոսը վերադարձրեց Յուլիանոսի ժամանակ բոլոր աքսորուած եպիսկոպոսներին, սակայն քրիստոնէական աղանդներին և հեթանոսութեանը կատարեալ ազատութիւն շնորհեց հաւատի գործերի մէջ, համարելով, որ անհամաձայնութիւնը—մարդկային սահմանափակութեան անխուսափելի վիճակն է։ Այս հայեցակէտը կայսրը ձեռք բերեց աւելի շուտ եպիսկոպոսների մեծամասնութեան պահանջների հակառակ, քան նրանց ազդեցութեամբ։

Յորիանոսի յաջորդ Վաղէնսիսիանոսը (364—375), կրօնական գործերի մէջ չմիջամտելու քաղաքականութեանն էր հետևում։ Ընդհակառակը, արևելքը տուժում էր Վաղէնտինիանոսին իշխանակից Վաղէնսիոսի (364—378) հովանաւորութիւնից, այն բանից, որը նա ուղղափառ էր համարում։ Վաղէնտինիանոս Ա-ի յաջորդ Գրասիանոսը (375—383), նրա սկզբունքներին համապատասխան ընթացք բռնեց քրիստոնէական կուսակցութեանց մեծամասնութեանը կրօնական ազատութիւն աւելով. (Ի բաց առեալ Մանիքէցիները, Եւնոմիանները և Փոտինեանները)։ Վաղէնսիսիանոս Բ-ի (383—392) կառավարութեան միջոցին տատանումն է նկատւում։

Արևելքի նրա իշխանակից Թէոդոս Մեծը (379—395) իրեն ընդհանուր ուղղափառութեան կողմնակից յայտարարեց, այն հաւատին, որ ունէին Հռոմի Դամասոս և Աղէքսանդրիայի Պետրոս եպիսկոպոսները,—և հակառակ հերետիկոսներին։ «Հաւատի գործերի մէջ առանձնաշնորհումներով պէտք է օգտուեն միմիայն ուղղափառ օրէնքների հետևողները։ Մենք կամենում ենք, որպէսզի հերետիկոսները և աղանդաւորները ոչ միայն զուրկ լինին այդ առանձնաշնորհումներից, այլ և ենթարկուեն զանազան պարտականութեանց։ Հերետիկոս նախատական անուամբ նշաւակուած, նրանք, բացի աստուածային արդարադատութեան կողմից դատաւարտուելուց, պէտք է աւելի ծանր պատիժների սպասեն, որոնց կհաճի ենթարկել մեր կայսերական մեծութիւնը երկնային իմաստութեան ներշնչմամբ»։ Ընդհանրապէս Թէոդոս Մեծը եկեղեցու

դործերին միջամտելուց զերծ չէր: Իւր 15-ամեայ թագաւորութեան ընթացքում նա առնուազն 15 օրէնք հրատարակեց հերետիկոսների դէմ. (Cod. Theod. XVI, 5, 6-23), որոնցով նրանց քաղաքացիական և կրօնական իրաւունքները խիստ սահմանափակոււմ էին. նրանց արգելուիլ էր քաղաքի մէջ հասարակական աղօթքների համար ժողովներ կազմել, քարոզներ կարդալ, ձեռնադրութիւն անել:

Թէոդոս Մեծի թագաւորութիւնը եկեղեցու պատմութեան համար շատ կողմերով նշանաւոր շրջան է կազմում: Նա անձնապէս այն սակաւաթիւ կայսրներից մէկն էր, որոնք Ռիզանդիայի դահը վարդարեցին: Քրիստոնեայ համեստ ընտանիքի մէջ կրթուած լինելով Թէոդոսը խոնարհութեամբ հպատակոււմ էր եկեղեցու պատուէրներին, մատչելի էր իրեն շրջապատող եպիսկոպոսների բարոյական ամենալաւ ազդեցութիւններին, ընդունակ էր նրանց յարգելու իրենց բարոյական պարտականութիւնների ճշտիւ կատարման համար նոյն իսկ այն ժամանակ, երբ նրանք կայսեր զգալ էին տալիս եպիսկոպոսի և կայսեր իշխանութեան մէջ և եղած խոշոր տարբերութիւնը: Իբրեւ անձնաւորութիւն Թէոդոսը բարձր էր Կոստանդնից, ուստի և եկեղեցական քաղաքականութիւնը կարող էր կատարելապէս եկեղեցու պահանջների համեմատ ուղղութիւն ունենալ: Եթէ աւելացնենք նաեւ, որ Թէոդոս Մեծի ժամանակակից էր այնպիսի մի եպիսկոպոս, ինչպէս Ամբրոսիոս Մեդիոլանացին, որ եկեղեցու արժանաւորութեան և եկեղեցու շահերի գիտակցութեամբ խորապէս թափանցուած այս հեգեւորականը մօտ յարաբերութիւն ունէր Թէոդոս Մեծի հետ և նրա ազատ խօսքը հնչում էր նոյն իսկ կայսեր դէմ,—այն ժամանակ կարելի է աչքի առաջ ունենալ հետաքրքրութիւնը այն փաստացի հիմունքների, որոնցից կազմոււմ են այս թագաւորութեան ընթացքում եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները:

Մենք տեսնում ենք, որ իւր թագաւորութեան հէնց սկզբում նա իրեն ընդհանրական ուղղափառութեան կողմնակից է յայտարարում: Թէ ինչպէս էր դործում Թէոդոսը

